

ՄԵՐ ԽՕՍՔԸ



Պահ մը կրնա՞ք դուք ձեզի երեակայել անլեզու մարդ:

Վստահ եմ, որ պիտի չուզէք նման անձ մը ըլլալ:

Լեզուներ գիտնալ կը նմանի ունենալ բանալիներ, որոնք մեր դիմաց կը բանան բազմաթիւ աշխարհներ:

Մենք բախտաւորներէն ենք, որ նուազագոյնը երեք լեզու գիտենք եւ այդ լեզուներով կրնանք խօսիլ, աղօթել, երգել եւ գրել:

Բայց լեզու մը խնամքի եւ գուրգուրանքի կը կարօտի: Անտեսուած լեզուն շուտով կը կորստի:

Ինչպէ՞ս խնամել մեր լեզուն: Լեզուն խնամել այնպէս ինչպէս կը խնամենք մեզի համար կարելոր առարկայ մը:

Այսպէս՝ նախ լեզուն պիտի գործածենք իրեն յարմար միջավայրին մէջ: Եթէ հայկական շրջանակի մէջ ենք, օգտագործենք ամբողջական հայերէնը, նոյնն է պարագան ֆրանսերէնին եւ կամ անգլերէնին: Զգոյշ ըլլանք մէկ նախադասութեան մէջ երկու լեզուներով արտայայտուելէ. օրինակ՝ «Lunch bag- իս մէջ carrot ունիմ» ըսելու փոխարէն ըսենք «ճաշամանիս մէջ ստեպղին ունիմ»: Որքան պարզ եւ յստակ է:

Լեզու մը խօսիլը որքան որ գիտութիւն է, նոյնքան ալ ճաշակ է:

Հայերէն լեզուն մեր գոյութեան լաւագոյն գէնքն է: Մեր լեզուն պղտորելով մենք ուրախացուցած կ'ըլլանք մեզ չսիրողները:


Ուրեմն ժամանակն է, որ տէր ըլլանք մեր լեզուին:

ՁՈՒԼՈՒՄԻ ԴԵՍ ՓՐԿԱՐԱՐԸ

Ձուլուիլ կը նշանակէ հալելով ուրիշ տարրի հետ խառնուիլ: Օրինակ մետաղները իրարու հետ խառնուելով կրնան վերածուիլ անլի զօրաւոր եւ տոկուն տեսակի:

Բայց մարդոց եւ ժողովուրդներու համար այս գործողութիւնը հակառակ ազդեցութիւն կու տայ եւ կը դառնայ վտանգաւոր: Ազգեր իրարու հետ խառնուելով, տարուէ տարի կը կորսնցնեն իրենց լեզուն, մշակոյթը, սովորութիւնները եւ վերջապէս կը կորստին:

Այս վտանգին մենք եւս ենթակայ էինք 387 թուականին, երբ մեր երկիրը բաժնուած էր երկու մասերու՝ պարսկական եւ յունական պետութիւններուն միջեւ:



Դպրոցներուն եւ եկեղեցիներուն մէջ կը գործածուէր յունարէն եւ պարսկերէն լեզուները: Հայերէնը կամաց-կամաց կը մոռցուէր:

Մերոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի համար մեծ մտահոգութիւն էր: Պէտք էր հայերէն գիրեր ստեղծել:

Վռամշապուի թագաւորի հրամանով Մերոպ Մաշտոց գործի կը սկսի եւ երկար աշխատանքէ ետք 405 թուականին կը գտնէ հայերէն 36 գիրերը: Օ եւ Ֆ գիրերը հետագային կ'աւելնան: Տառերը կ'ունենան անուններ (այբ, բեն, գիմ...), եւ գրութիւնը կ'որոշուի գրել ձախէն աջ՝ յունարէն լեզուին պէս:

Կը թարգմանուի Աստուածաշունչը, դպրոցներուն մէջ դասաւան դութիւնը կը փոխարինուի հայերէնով: Հայերէնը կը դառնայ մայրենի լեզու եւ կը փոխանցուի սերունդէ սերունդ:

Կը տեսնենք, թէ ձուլումի դէմ փրկարարը հայերէն լեզուն է: Տէրը ըլլանք մեր լեզուին:



ԱՇՆԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Նոնենին բաղդատելով ուրիշ պտղատու ծառերու հետ, ասելի ուշ կը ծաղկի, այսինքն Յունիս ամսուն:

Պզտիկ ծաղիկներով զարդարուած ծառը կը դիմանայ չոր եւ տաք կլիմաներուն:

Աշնան՝ Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներուն մէջ այս ծաղիկները պտուղի կը վերածուին:



Նուռին մէջ կը գտնենք հիպալի եւ քաղցր բազմաթիւ հատիկներ, որոնց հիւթը շատ օգտակար է եւ ունի բուժիչ յատկութիւններ. օրինակ՝ հարբուխը յաղթահարելու համար նուռին հատիկները կերէք կամ հիւթը խմեցէք: Հայաստանի մէջ նոնենին հետքերը գտնուած են երեք հազար տարիներ առաջ: Հին հայերու համար նոնենին կեանքի, առատութեան եւ պտղաբերութեան խորհրդանիշը եղած էր: Այդ պատճառով մեր հայրենի արուեստագէտներու գործերուն եւ եկեղեցիներու մէջ, գորգերու վրայ եւ մեր ճարտարապետութեան մէջ յաճախ կը հանդիպինք նուռերու նկարներուն:



ՈՐՂԱՆ ԿԱՐՄԻՐ


Երեանի Մերոպ Մաշտոցի անուան մատենադարանին մէջ պահուած ձեռագիր մատենաներուն մէջ կը գտնենք կարմիր գոյնով գծուած գեղեցիկ մանրանկարներ:

Այդ նկարներուն համար օգտագործուած ներկը ստացուած է փոքրիկ կարմիր միջատէ՝ հայկական որդան կարմիրէն: Որդան կարմիրը նշանաւոր է իր վառ կարմիր ներկ տալու յատկութեամբ:



Որդան կարմիրը տարածուած է Արարատեան դաշտին մէջ, կոչուած է նաեւ Արքայական Ծիրանի, որովհետեւ անով կը ներկէին թագաւորական հագուստները:

Գէտէիք թէ, մատենադարան ձեր այցելութեան ընթացքին կրնաք հանդիպիլ հոն պահուած կենդանի որդան կարմիր միջատներուն:



Պահուած բառ

Պահուած բառը կը բաղկանայ 6 տառերէ եւ պտուղի մը ծառին անունն է:


մ	ե	ս	ր	ո	պ
ա	հ	ռ	ե	ր	գ
շ	ա	ա	ն	դ	ի
տ	ն	ռ	յ	ա	ւ
ո	ն	ն	ի	ն	տ
ց	լ	ե	գ	ո	ւ

ան
գիտ
լեզու

հայ
Մերոպ Մաշտոց

որդան
տառ

«ՕՂԱԿՆԵՐՈՒ ԹԱԳԱՒՈՐ» ԱԼՊԵՐԹ ԱԶԱՐԵԱՆ



Մարմնամարզիկ, օղակներու վարժութեան ախոյեան ու մասնագէտ, «Օղակներու թագաւոր», Ալպերթ Ազարեան ծնած է 1929-ին:

Ալպերթ իր կեանքի ընթացքին կը մասնակցի բազմաթիւ ախոյեանական մրցաշարքերու, որոնք տեղի ունեցած են 49 պետութիւններու մէջ՝ Ողիմպիական խաղեր, Համաշխարհային Ախոյեանութեան խաղեր, Ասիական խաղեր, Եւրոպայի ախոյեանութեան մրցաշարքեր, նուաճելով 45 ոսկեայ, 42 արծաթեայ եւ 10 պղինձէ մետալներ:



1953-ին Հայաստանի հաւաքականին հետ Լենինկրատի մէջ կայացած Խորհրդային Միութեան միջ-մարմնամարզական մրցումներուն մասնակցած առեւ, օղակներու վարժութեան ոսկեայ մետալը կը նուաճէ: Օղակներու վարժութեան ներկայացման ընթացքին, անգիտակցաբար կը յաջողի անկարելին՝ «խաչի վարժութեան» կանգուն մնալ անհրաժեշտ երեք վայրկեանը եւ մարմինը շրջել դէպի աջ ու դէպի ձախ: Այս երեք վայրկեաններուն ընթացքին կատարած վարժութիւններուն ամբողջութիւնը, Մարմնամարզումի Միջազգային Դաշնակցութիւնը կ'անուանէ «Ազարեանական խաչ» (Azaryan Cross):



2009-ին, Երեանի մէջ, ի պատիւ Ազարեանի, դրոշմաթուղթ կը հրատարակուի: Ալպերթ Ազարեան կեանքէն կը հեռանայ 5 Սեպտեմբեր 2023-ին, 94 տարեկանին, մեծ հոշակ ձգելով ոչ միայն հայկական շրջանակի մէջ, այլ աշխարհի տարածքին. մինչեւ օրս հայ թէ օտար մարզիկներ կը փորձեն կրկնել Ազարեանի «Ազարեանական խաչ» կոչուած խաչածէ դժուար դիրքը:

ՆԱՄԱԿՆԵՐ ՍՓԻՒՌՔԷՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Բոլոր հայ աշակերտներուն նման, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի աշակերտները վերջերս շատ տխուր են, կը ցաւին եւ կարիքը ունին արտայայտուելու: Հետեւաբար, անոնք որոշեցին գրել իրենց զգացումներուն մասին՝ ուղղուած Արցախի ընկերներուն եւ Հայաստանին:

Սիրելի հայ ժողովուրդ, ես հայ աղջիկ մըն եմ, անունս Տանիէլա Տէքումէնճեան է: Ես կ'ապրիմ Գանատայի մէջ եւ կը յաճախեմ Մոնթրէալի Ս. Յակոբ վարժարանը: Ես 9 տարեկան եմ: Արցախն ու Հայաստանը շատ գեղեցիկ են: Ես հայրենիքս շատ կը սիրեմ եւ միշտ պիտի սիրեմ: Հայերէն լեզուն շատ գեղեցիկ է: Կը խնդրեմ, որ մենք շարունակենք հայերէն խօսիլ:

Տանիէլա Տէքումէնճեան, Դ. Կարգ

Բարեւ հայեր, գիտեմ, որ շատ գէշ վիճակի մէջ ենք: Բայց կ'ուզեմ ձեզի բան մը ըսել: Իմ անունս Լորա Ճուրեան է: Ես շատ պզտիկ եմ, որ պատերազմի երթամ եւ կռուիմ թշնամիին դէմ, բայց ես կրնամ կռուիլ հայերէն խօսելով: Ես ձեզի կը խոստանամ, որ օր մը ետ պիտի առնենք մեր կորսնցուցած հայրենիքի մասերը:

Լորա Ճուրեան, Դ. Կարգ

Բարեւ սիրելի Արցախի քոյր եւ եղբայր, ես Նարոյն եմ, քոյրիկիս անունը Արծնի է: Ես 9 տարեկան եմ եւ կը յաճախեմ Մոնթրէալի Սուրբ Յակոբ դպրոցը: Ես շատ կ'ուզեմ ազատել Հայաստանը եւ Արցախը թշնամիէն: Հայաստանը իմ ամէնէն սիրած երկիրս է: Ես Հայաստան պիտի գամ եւ ամէն հայ ժողովուրդը պիտի հաւաքեմ եւ պիտի կռուիմ թուրքին դէմ:

Նարոյ Խաչերեան, Դ. Կարգ

Սիրելի Արցախ եւ Հայաստան, Գիտեմ, որ այս օրերը շատ, շատ, շատ դժուար էին զինուորներուն եւ ձեզի համար: Ես պզտիկ տղայ մըն եմ, Տարօն անունով եւ 9 տարեկան եմ: Կ'ուզէի ձեզի մի քանի բան ըսել, կրնայ ըլլալ որ շատ պզտիկ եմ, բայց ուզեցի գրել: 1- Կ'ուզէի ըսել, որ մօտաւորապէս 7.5 միլիոն հայ կայ աշխարհի մէջ, 3750000 հոգի կը փորձէ ձեզի օգնել, ցոյցեր ընելով եւ խօսելով, մինչեւ որ աշխարհը գիտնայ, թէ ինչ կը պատահի հայերուն: 2- Քեպէզի մէջ կան երեք հայկական դպրոցներ. ես կը յաճախեմ Ս. Յակոբ վարժարանը, որ ունի 750 հայ աշակերտ, եւ ես անոնցմէ մէկն եմ: 3- Ես շատ պզտիկ եմ զէնք վերցնելու, բայց գիտեմ, որ մէկ զէնք ունիմ, այդ ալ իմ հայերէն լեզուս է:

Տարօն Զաքարեան, Դ. Կարգ

Սիրելի Արցախի եւ Հայաստանի պզտիկներ, Իմ անունս Լոռի Գրիգորեան է: Կ'ուզեմ ըսել, որ դուք առանձին չէք աշխարհի վրայ, մենք ձեզի հետ ենք եւ ձեզի պիտի օգնենք: Ես Ս. Յակոբ դպրոց կ'երթամ, հոն մենք հայերէն կը խօսինք եւ ձեր մասին կը մտածենք: Մի վախնաք:

Լոռի Գրիգորեան, Դ. Կարգ

Սիրելի Հայաստանի ժողովուրդ եւ հայ քաջ զինուորներ, Գիտեմ, որ Արցախը կորսնցուցինք, բայց գիտեմ, որ Հայաստանը կրնանք պահել: Ես Լուգա Սալպրզեանն եմ, Գանատայի Մոնթրէալի Ս. Յակոբ վարժարան կ'երթամ, եւ հայերէն լեզուն իմ զէնքս է:

Լուգա Սալպրզեան, Դ. Կարգ

Բարեւ, Անունս Վագո Մալխասեան է: Հայերը քաջ են, բայց ոչ թուրքերը: Աշխարհի չորս կողմէն հայերը պիտի հաւաքուին եւ մէկ տարի վերջ նորէն պիտի յարձակին թշնամիին վրայ, մինչեւ որ «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան» ունենանք:

Վագո Մալխասեան, Դ. Կարգ

ԱՅՆ ՕՐԸ, ԵՐԲ...

Այն օրը, երբ մեր սիրելի Արցախը գրաւուեցաւ ազերիներուն կողմէ, շատ յուզուեցայ:

Արցախը իմ տունն է:

Գիտեմ, որ լացը մեր թշնամին կ'ուրախացնէ, ուրեմն շատ կարեւոր է զօրաւոր մնալ: Պէտք է միասնական ըլլանք, որպէսզի ուժեղ եւ անսանձելի դառնանք եւ գոյատեւենք:

Ապագային կ'ուզեմ մանկավարժ դառնալ՝ աւանդելով մեր լեզուն, պատմութիւնը եւ մշակոյթը նոր սերունդին եւ օգտակար դառնալ հայրենիքիս:

Վանի Հանէսեան, Զ. Կարգ

Այն օրը, երբ մեր կանաչապատ Արցախը կորսնցուցինք, հոգիս փլեցաւ: Սիրտս կը ցաւէր, որ Արցախի մէջ այդքան գէշ բաներ կը պատահին, բայց աշխարհը լուռ կը մնայ: Վրէժով լեցուած էի:

Արցախը իմ հոգին է: Ես ՀՅԴ ԳՊՄ-ի անդամ եմ: Երբ մեծնամ, հայ դատի ներկայացուցիչ պիտի ըլլամ եւ կրցածիս չափ պիտի օգնեմ հայրենիքիս: Արցախը մերն է ու պիտի մնայ:

Հրակ Հարիպեան, Զ. Կարգ

Այն օրը, երբ մեր սիրելի Արցախը յանձնուեցաւ եւ այլեւս ազատ ու անկախ Արցախ չմնաց, եւ շատ տխրեցայ եւ նոյն ատեն զարմացայ, որ մեծ պատերազմով ազատագրուած մեր սուրբ հողը այդքան արագ թշնամիին ձեռքը անցաւ:

Հիմա եւ վրէժով լեցուած եմ եւ արդէն կարօտցած իմ լեռնային կանաչազարդ Արցախս:

Երբ որ մեծնամ, յայտնի փաստաբան պիտի դառնամ եւ գլխաւոր նպատակս պիտի ըլլայ օգտակար դառնալ հայրենիքիս: Շատ ջանք պիտի թափեմ, որպէսզի կարենամ պաշտպանել ու պահանջել հայութեան իրաւունքները:

Արցախը նորէն մերը պիտի ըլլայ:

Արեգ Մոնճեան, 2. Կարգ

Այն օրը, երբ մեր սքանչելի, լեռնային ու հզօր Արցախը կորսնցուցինք, շատ տխրեցայ, յուզուեցայ, բայց... չուսահատեցայ, որովհետեւ կը հաւատամ, որ ապագային պիտի զօրանանք եւ մեր ուժերով պիտի ազատագրենք Արցախը:

Արցախը մեր տունն է:

Երբ որ մեծնամ, կը փափաքիմ գրագիտուի ըլլալ եւ գիրքեր գրել մեր ազգին մասին: Պատմութիւններու մէջ պիտի նկարագրեմ Հայաստանի ու Արցախի գեղեցիկ բնութիւնը, պիտի խօսիմ մեր ժողովուրդի հարուստ մշակոյթին ու հերոսներուն քաջութեան մասին:

Գիրքերս անգլերէն լեզուով պիտի գրեմ եւ գունաւոր ու գեղեցիկ պատկերներ պիտի աւելցնեմ, որպէսզի կարդացուին աշխարհի չորս կողմերը գտնուող մարդոց կողմէ: Երբ նշանաւոր գրագիտուի մը դառնամ, բոլոր ընթերցողներս պիտի ճանչնան հայերը, Հայաստանն ու Արցախը:

Արին Թորիկեան, 2. Կարգ

Այն օրը, երբ մեր հայրենի Արցախը զաւթուեցաւ, եւ ջրային դարձայ, որովհետեւ զայն չէի տեսած: Առանց Արցախի ես տկար կը զգամ ինքզինքս:

Արցախը մեր հայրենիքն է:

Թշնամի թուրքը մէկ անգամ եւս իր զէնքի ուժով զաւթեց Արցախը եւ հարիւր հազար մեր հայրենակիցները զրկուեցան իրենց հայրենի հողէն: Հայաստանը սիրով ընդունեց իր զաւակները:

Մեր հայրենիքը կը դիմադրէ իրմէ շատ անելի մեծ երկու պետութիւններու՝ Թուրքիոյ եւ Ատրպէյճանին: Կը յուսամ, որ աշխարհի մեծ պետութիւնները կը կեցնեն այս երկու հրէշները:

Ապագային գիտնական կ'ուզեմ ըլլալ եւ իմ գիտերովս հզօրացնել հայրենիքս:

Շանթ Ղազարեան, 2. Կարգ

Ո՛Վ Կ՛ՈՒԶԷ ԲԱԶՄԱԳԵՏ ԸԼԼԱԼ

Հոկտեմբեր ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 13 Նոյեմբեր 2023-ը: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը «Հորիզոն»ի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin
Montreal, Canada
H4J 1L5

<p>1- Որդան կարմիրը նշանաւոր է</p> <p>ա) կարմիր աչքերով: բ) կարմիր ներկ տալու յատկութեամբ: գ) կարմիր ծաղիկներէ ախորժելով:</p> <p>2- Որդան կարմիրի ներկը օգտագործուած է</p> <p>ա) «Հորիզոն» շաբաթաթերթի մէջ: բ) բառարաններու մէջ: գ) ձեռագիր մատենաներու մէջ:</p> <p>3- Ո՛վ հրաման կու տայ, որ Մեսրոպ Մաշտոց սկսի գործի:</p> <p>ա) Վռամշապուհ թագաւոր: բ) Արա գեղեցիկ: գ) Հայկ Նահապետ:</p> <p>4- Ո՛ր թուականին Մեսրոպ Մաշտոց կը գտնէ հայերէն գիրերը:</p> <p>ա) 405 թուականին: բ) 1915 թուականին: գ) 2000-ին:</p> <p>5- Ձուլովի կը նշանակէ</p> <p>ա) մէկ տեղէն ուրիշ տեղ երթալ: բ) հալելով ուրիշ տարրի հետ խառնուիլ: գ) շատնալ:</p>	<p>6- Հայաստանի մէջ նոնենիին հետքերը գտնուած են</p> <p>ա) 500 տարի առաջ: բ) 1500 տարի առաջ: գ) երեք հազար տարիներ առաջ:</p> <p>7- Հին հայերու համար նոնենին</p> <p>ա) կեանքի խորհրդանիշը եղած էր: բ) պտղաբերութեան եւ առատութեան խորհրդանիշը եղած էր: գ) երկու պատասխաններն ալ ճիշդ են:</p> <p>8- Նուռի նշարներուն կը հանդիպինք</p> <p>ա) գորգերու վրայ եւ եկեղեցիներու մէջ: բ) օդանաւերու վրայ: գ) երկու պատասխաններն ալ ճիշդ են:</p> <p>9- «Ազարեանական խաչ» կը կոչուի</p> <p>ա) խաչաձեւ դիրքին համար: բ) խաչակիր ըլլալու համար: գ) քրիստոնեայ ըլլալու համար:</p> <p>10- Մարմնամարզիկ, օղակներու ախոյեան է</p> <p>ա) Արթուր Ալեքսանեան: բ) Ալպերթ Ազարեան: գ) Արսէն Յարութիւնեան:</p>
---	--